Սայաթ Նովա

Ինչ կոնիմ հեքիմը

Էսպես Շիրվանի հանգում, որ ասում են Յոլարումզդան: Էսպես Արութինն ու իր սիրեկանը որ խոսել են, էն է:

Ինչ կոնիմ հեքիմը, ի՛նչ կոնիմ ջարեն,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:
Էրում է մըհլամը, չէ լավնում յարեն.
Քու տըվածը ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ:

Ասաց թե՝ հիռա՛ցի գըլխե՛մես, գընա.
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
Էտ քու արարմունքսը քիզի չի մընա,
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ամա՛ն, ո՛ւրիշ տիղ:

Ասի թե՝ էշխեմեդ չիմ հանքչում տանըս,
Ձեռնիրըս թըլացավ՝ չէ շինում բանըս,
Էրվեցավ ջիգարըս, մաշվեցավ ջանըս,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ:

Ասաց՝ իմ դիղեմեն քիզ չը կա չարա,
Գընա՛, թե խիլք ունիս՝ գլխիդ ճար արա,
Թե չէ՝ անիլ կու տամ քիզ փարա-փարա.
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ:

Յիս բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումը.
Կըրակ դըրիր սըրտիս խուցի յարումը.
Վո՞ւնց գըրանքումը կա, վո՞ւնց դավթարումը,
Քու տըվածը ուրիշ դիդ է, ո՛ւրիշ դիդ:

Ասաց թե՝ քի զարար շինեցիր շահ՝ըդ.
Կըտրեցիր ադաբըդ, կըտրեցիր ահըդ.
Մի՛ վիթի արունըդ, մի՛ շանց տա մահըդ.
Քու ասածը ուրիշ տիդ է, ո՛ւրիշ տիդ:

Ասի թե՝ մազիրդ սիրմա սիմ իս անում,
Հենց գիդիս՝ չիմ գիդի, յա՛ր, չիմ իմանում.
Սերըդ ինձ մահ դառավ՝ է՛լ չիմ դիմանում,
Քու տըվածը ուրիշ դիդ է, ո՛ւր՛իշ դիդ:

Թաքավուրի թագի լայիդ քարըն իմ,
Շիրինի պես Փահրադի դիդարըն իմ,
Յիս է՛ն գըլխեն Սայաթ Նովու յարըն իմ,
Քու ասածը ուրիշ տիդ է, ուրիշ տիդ:

Հիդըս խոսի, մի՛ կենա խըռովի պես.
Տալդա տըվիր, գեմիս տարար, ծովի պես.
Կու մեռնիմ, չի՞ս տեսնի Սայաթ Նովի պես.
Քու տըվածը ուրիշ դիդ է, ո՛ւրիշ դիդ.
ամա՜ն, ո՛ւրիշ դիդ: